
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆՁԵԴԱՐՅԱՆ ՁՁՈՒՄՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ, ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ

Ձձուձը երկարավուն ձվաձև խեցանոթ է, որը նախատեսված է կարագ ստանալու համար՝ մերվածքը՝ մածուն կամ թթվասեր, հարելու միջոցով¹: Կավանոթի մակերևույթին ընդգծվող ուռուցիկ հատվածում՝ ուսի վրա, միջանցիկ անցք է արված: Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարան»-ում ձձուձը բնորոշվում է որպես «առձեռն փոքր խնոցի»²: Ըստ ազգագրական տեղեկությունների՝ այն հարում էին կանայք՝ նստած վիճակում, ձձուձը հորիզոնական դիրքով տեղադրելով գետնին փռված կարպետի վրա:



Ձձում հարող կինը

¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. II, Երևան, 1972, էջ 539, Հայկական սովետական հանրագիտարան, հ. V, Երևան, 1979, էջ 63:

² Հ. Աճառեան. Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 691:

Կարասի կամ մեծ սափորի ձև ունեցող այդ կավանոթը կոչվում էր «նստման կամ ձեռի ձձում»³: Ձձումը հայ ազգագրության մեջ անվանվում է նաև «գետնին դրվող (պանկած) խնոցի»: Ենթադրվում է, որ ձձումները գործածվել են բրոնզի դարաշրջանում, երբ խնոցիները դեռևս հայտնի չէին⁴: Նման խեցանոթների ի հայտ գալը, բնականաբար, հետևանք է անասնապահության մեջ կաթնաստնտեսության զարգացման: Հարցի վերաբերյալ հնագույն գրավոր տեղեկություններից է Դումուզիի պոեմում սրբազան ձձումների հիշատակությունը. «Իմ սրբազան ձձումի տակդիրը կորել է» կամ «Ձձումը շրջված է, կաթը լցված չէ»⁵: Հիշյալ տեղեկությունը պարունակող կավե աղյուսակը թվագրվում է մ. թ. ա. XVIII դ. կեսով: Բհարկե, Հայկական լեռնաշխարհում հայտնի են ավելի վաղ ժամանակաշրջանների ձձումներ: Վաղբրոնզեդարյան հնագիտական համալիրների պեղումներով հայտնաբերված խեցեղեն հավաքածուներում առկա են կաթնամթերքի վերամշակման նպատակով պատրաստված անոթներ, որոնք համարվում են «խնոցիների (իմա՝ ձձումների) նախատիպերը»⁶: Կարելի է նաև ենթադրել, որ մինչև հիշյալ տիպի ձձումների ի հայտ գալը կարագ ստանալու համար հատուկ անոթներ չեն գործածվել: Թթված սերը լցվել է այդ նպատակին հարմար որևէ մեծ անոթի մեջ և հարելով կարագ ստացվել⁷: Ինչ վերաբերում է կաթնամթերքի մշակմանն ընդհանրապես, ապա Հայաստանի պղնձեդարեդարյան հուշարձաններում ևս հայտնաբերվել են տարատեսակ կավամաններ, որոնք ծառայել են այդ նպատակին⁸:

Կուր-արաքսյան խեցանոթների շարքում որոշակի թիվ են կազմում թրծակավե ամբողջական ձձումները կամ դրանց բեկորները⁹: Այսպես, վաղբրոնզեդարյան ձձումներ են հայտնաբերվել Շենգավիթ հնավայրում¹⁰, Նախճավանի Սոխրաբլու-

³ А. Т. Марутян. Интерьер армянского народного жилища.— Армянская этнография и фольклор. Материалы и исследования, 17. Ереван, 1989, с. 131–132, таб. XLV, 2-5.

⁴ Մ. Լիսիցյան. Ջանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 153, 171:

⁵ С. Крамер. Мифология Шумера и Аккада.— Мифологии древнего мира. М. 1977, с. 138–141.

⁶ Է. Վ. Խանգալյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 40:

⁷ Т. А. Бунятов. Из истории хозяйства в древнем Азербайджане (К вопросу об изготовлении молочных продуктов).— Краткие сообщения Института истории материальной культуры, вып. 67, 1957, с. 38; Գ. Շիրախանյան. Հայոց ժողովրդական մշակույթը, հ. Ա, Երևան, 2003, էջ 264:

⁸ Ռ. Մ. Թորոնյան. Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը (մ. թ. ա. IV հազարամյակ), Երևան, 1976, էջ 109:

⁹ О. М. Джапаридзе. Культура раннеземледельческих племен на территории Грузии.— VII Международный конгресс антропологических и этнографических наук. М., 1964, с. 4; Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 86.

¹⁰ Т. С. Хачатрян. Материальная культура древнего Артика. Ереван, 1963, с. 142–143; С. А. Есян. Ереван (Археологический очерк). Ереван, 1969, с. 18.

րում¹¹, Գառնիում¹², Էլառում¹³, Բաբադերվիշում (աղ. I,¹)¹⁴ և կուր-արաքսյան այլ հուշարձաններում: Ի դեպ, Բաբադերվիշի առաջին և երկրորդ բլուրների պեղումներով հայտնաբերվել են մոտավորապես քսան կավե ձձումներ¹⁵: Դրանք հիմնականում ներկայացված են մեծ չափերի անոթների բեկորներով, որոնցից յուրաքանչյուրի վրա մեկական միջանցիկ անցք է առկա: Անցքերն արվել են թրծումից առաջ՝ երբեմն կիսագնդաձև կանթերի հարևանությամբ (Նախճավան, Բաբադերվիշ): Պատմական Փայտակարան նահանգի Հրաքոտ-Պերոժ գավառի Ղարաքոփակթեփե վաղբրոնզեդարյան բնակատեղում հայտնաբերված խեցանոթների թվում կան նաև ձձումներ¹⁶: Վաղ շրջանի ձձումները ձևով նման են սափորների: Դրանց մի մասն ունի բաց-կարմիր մակերևույթ, որը թեթևակի փայլեցված է: Կլոր անցքերը սովորաբար տեղադրված են անոթների ուսերին կամ էլ անցումային մասից մի փոքր բարձր, դրանց տրամագիծը մոտավորապես 1 սմ է¹⁷: Նախճավանում հայտնաբերված ձձումներից մեկը ձվաձև է, ունի մոխրագույն կոկված մակերևույթ և համեմատաբար լայն հատակ: Իրանի վերին հատվածում տեղադրված երեք կիսագնդաձև կանթերից պահպանվել է միայն մեկը: Այդ կանթից վեր կա ոչ մեծ միջանցիկ անցք, որն արվել է մինչև թրծումը: Այդպիսի մեկ այլ անոթ պատրաստված է կոպտորեն, թրծումն անհավասարաչափ է, մոխրագույն սև բծերով: Մրա մակերևույթը թեթևակի կոկված է, հատակը հարթ է և լայն, իրանը՝ ձգված, վիզը՝ լայն, շուրթը՝ ձկնաձև: Կանթերի փոխարեն իրանի վրա կան կոնաձև երեք էլունդներ (աղ. I,²): Կողքին մինչ թրծումը շաղափված է փոքրիկ միջանցիկ անցք: Այս անոթը, ինչ-

¹¹ О. А. Абибуллаев. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982, с. 126–127.

¹² Է. Վ. Խանգաղյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., էջ 65, նույնի՝ Գառնի IV, Երևան, 1969, էջ 48:

¹³ К. Х. Кушнарева. Южный Кавказ в IX–II тыс. до н. э. Этапы культурного и социально-экономического развития. СПб., 1993, с. 226; Է. Վ. Խանգաղյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., էջ 65, նույնի՝ Գառնի IV, էջ 49: Է. Խանգաղյանի կարծիքով, Էլառի խեցանոթներից մեկի վզի հատվածում գտնվող միջանցիկ անցքն արվել է ջարդված կավամանր վերականգնելու նպատակով, սակայն տեքստից պարզ չի դառնում անցքը բացվել է նախքան անոթը թրծելը, թե՛ թրծելուց հետո:

¹⁴ Г. С. Исмаилов. Археологическое исследование древнего поселения Баба-Дервиш. Баку, 1978, с. 23–25, таб. I,⁶.

¹⁵ И. Г. Нариманов. Архаические керамические маслбойки и этимология азербайджанского слова «нехре» (маслбойка). – Кавказ и Восточная Европа в древности. М., 1973, с. 60.

¹⁶ Г. С. Исмаилов, О. А. Даниелян, Н. С. Ибрагимов. Работы Физулинской экспедиции. – Археологические открытия (այսուհետև՝ АО) 1986 года. М., 1988, с. 460.

¹⁷ Г. С. Исмаилов. Նշվ. աշխ., էջ 24–25, Փ. Мурадова. Гобустан в эпоху бронзы. – Автореферат дис. на соискание ученой степени канд. ист. наук. Баку, 1974, с. 11.

պես և վերոհիշյալը, ձևում է եղել¹⁸: Էլատում և Գառնիում հայտնաբերվել են ուսերին կլոր անցք ունեցող մեծ խեցանոթներ: Հավանական է համարվում, որ դրանք ձևումի նախատիպն են¹⁹: Հետաքրքիր է, որ Գառնիում գտնված ուռուցիկ իրանով, թույլ ներձկված գլանաձև վզով և դուրս ճկված շուրթերով սափորներից մեկի վզին նույնպես կլոր անցք է առկա²⁰:

Ամիրանիս գորայի X շինության պեղումներով հայտնաբերված ձուլմը թվագրվում է մ. թ. ա. III հազարամյակի 1-ին կեսով: Այն նեղ հատակով լայնաբերան սափոր է, որն իր վզի հիմքում օժտված է անցքով (աղ. I,3)²¹: Բ դեպ, Վրաստանում (Խիզանաանթ գորա) հայտնաբերվել են միջանցիկ անցքերով օժտված, միականթ, երկկանթ և եռականթ խոշոր անոթներ, որոնք, հավանաբար, պատկանում են վաղ բրոնզի դարաշրջանի առաջին փուլին²², իսկ կուր-արաքսյան մշակույթին պատկանող Թրեղի բնակատեղի պեղումներով գտնված երկու նմանօրինակ կավանոթներն անվանված են «դերգի»²³, որի հայերեն համարժեքը «բողոլ»-ն է²⁴: Ուշագրավ է, որ այդ մեծ²⁵, սափորաձև, և համեմատաբար լայնաբերան²⁶ կավամանների մեջ, այլ մթերքների շարքում, նաև կաթ, մածուն և յուղ է պահվել²⁷: Կառնուտի վաղբրոնզեդարյան խեցանոթներին նույնպես հատկանշական է միջանցիկ անցքերի առկայությունը: Մեզ հատկապես հետաքրքրում են այն անոթները, որոնց անցքերն արված են վզից իրանին անցման տեղում: Դրանք հաստախեցի անոթներ են, օժտված սև փայլեցված մակերևույթով, հազվադեպ՝ զարդաբանված: Իրանի վերին մասում անցքեր ունեցող անոթներն ավանդաբար համարվում են ձուլմանը: Կարծիք է հայտնվել, որ նման մոտեցումը կարիք ունի լրացուցիչ հիմնավորման²⁸: Մեր կարծիքով, սափորաձև մեծ խեցանոթը ձուլմ համարելու համար, բացի նախքան

¹⁸ О. А. Абибуллаев. *Նշվ. աշխ.*, էջ 126–127, աղ. XIX, 11:

¹⁹ Է. Վ. Խաչատրյան. *Հայկական լեռնաշխարհի մշակույթը...*, էջ 65:

²⁰ Է. Վ. Խաչատրյան. *Գառնի IV*, էջ 47–48:

²¹ Т. Чубинишвили. *Амиранис Гора*. Тбилиси, 1963, с. 27, 70, рис. 5,42 (на груз. яз.).

²² К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили. *Древние культуры Южного Кавказа (V–III тыс. до н. э.)*. Л., 1970, с. 66, 142.

²³ Р. Абрамишвили, Д. Гоциридзе. *Трельское поселение куро-аракской культуры*.– Тбилиси. Археологические памятники, I. Тбилиси, 1978, с. 38–40, рис. 11,218,219 (на груз. яз.).

²⁴ Ռ. Կ. Գորգաձե. *Վրացերեն-հայերեն բառարան*, Երևան, 2005, էջ 243:

²⁵ Հ. Աճառեան. *Նշվ. աշխ.*, էջ 195, Է. Բ. Աղայան. *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. I, Երևան, 1976, էջ 193:

²⁶ *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. I, Երևան, 1969, էջ 325:

²⁷ Հ. Աճառեան. *Նշվ. աշխ.*, էջ 195–196, Ե. Շահագիգ. *Աշտարակի պատմությունը*, Երևան, 1987, էջ 208, Գ. Կարախանյան. *Նշվ. աշխ.*, էջ 90:

²⁸ Р. С. Бадалян. *Раннебронзовое поселение близ с. Карнут*.– ИФЖ, 1984, № 1, с. 232–233.

թրծելը բացված անցքի առկայությունը²⁹, լրացուցիչ տվյալ կարող է հանդիսանալ անցքի և կանթի համահարաբերակցությունը: Օրինակ, կանթից վեր (կամ՝ դրան կից) գտնվող անցքից անոթի պարունակությունը չէր կարող դուրս թափվել, քանի որ ձևումը գործածելիս այդ հատվածն անոթի մյուս մասերի հարաբերությամբ ավելի բարձր դիրք էր գրավում: Բացի այդ, միջանցիկ անցքի այդ դիրքը հարմար էր կարագի ստացման ընթացքը վերահսկելու համար: Ձևում լինելու համար լրացուցիչ հիմնավորում կարող է ծառայել նաև համապատասխան անոթի զարդարանվածքը, եթե այն կրկնում է որևէ հայտնի ձևումի մակերևույթին եղած պատկերը: Ըստ ազգագրական տվյալների, ձևումների անցքերը, որոնք կոչվում են պոնք կամ պորտ, նախատեսված են եղել «չոփ գցելու» համար: Այսինքն, անցքի մեջ բարակ և երկար փայտի կտոր (չոփ) կամ ճյուղ են մտցրել³⁰ տեսնելու համար, թե կարագն արդեն եղել է, թե ոչ: Քանի որ գործածելու ընթացքում ձևումի բերանը պինդ փակվել է, ուստի անցքը ծառայել է նաև կավանթը տարուբերելու ժամանակ առաջացած գազերը դուրս գալու նպատակին: Ձևումների (ինչպես նաև «կաթքամիչների») առկայությունը վկայում է վաղ բրոնզի դարաշրջանում կաթնամթերքի վերամշակման և կարագ ստանալու մասին: Անասնապահության կաթնատու ճյուղի գոյությունը փաստող ձևումներ և քամիչներ են հայտնաբերվել նաև Հայկական լեռնաշխարհի հարևան տարածաշրջանների մ. թ. ա. IV հազարամյակի III քառորդի հուշարձաններում³¹:

Ըստ Կ. Քուշնարյովայի, Հայկական լեռնաշխարհում նմանօրինակ կավանթ է հայտնաբերվել նաև միջինբրոնզեդարյան հուշարձաններից մեկում: Արցախի Ուզերլիկ թեփե հնավայրի պեղումներով գտնվել է ձևումի հասակի բեկոր, որի ներսի կողմում պահպանվել է երկարուկ մի ելունդ (աղ. I, 6)³²: Հայտնի է, որ ձևումի աստառին ծեփված ելունդները նպաստել են «կարագն ավելի արագ հարելուն»³³: Եթե

²⁹ Այս համատեքստում պարզ է դառնում, որ Օձնիում հայտնաբերված սև փայլեցված մակերևույթով անոթը (աղ. I, 4) դժվար թե ձևում լինի, քանի որ սրա ուսի անցքը բացվել է թրծումից հետո: Նման ձևով լրահարդարված կավանթների հնարավոր նշանակության վերաբերյալ տե՛ս Բ. Ա. Куфтин. Археологические раскопки 1947 года в Цалкинском районе. Тбилиси, 1948, с. 39–41.

³⁰ Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 198–199, Ս. Լ ի ս ի ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 154; Ա. Թ. М а р у т я н. Նշվ. աշխ., էջ 132: Այդ ճյուղը, որով ստուգել են կարագի պատրաստ լինելու աստիճանը, կոչվել է խնցտեսի կամ էդտիս: Ծաղկագարդի / ծառգարդարի օրը՝ եկեղեցում ուռենու ճյուղերն օրհնելուց հետո, կանայք դրանցից տարել են տուն և գործածել հիշյալ նպատակով:

³¹ В. М. М а с с о н. Первые цивилизации. Л., 1989, с. 102.

³² К. Х. К у ш н а р е в а. Новые данные о поселении Узерлик–Тепе, около Агдама.– Материалы и исследования по археологии СССР, 1965, ¹ 125, с. 82–84, рис. 14.

³³ Ե. Բ ա յ բ ո լ ը յ ա ն. Աշխատանքի գործիքները Հին Հայաստանում.– «Տեղեկագիր» ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի, 1938, I, էջ 214:

ճիշտ է այս խեցաբեկորի թվագրությունը, սպա նշված նորամուծությամբ խեցեգործության զարգացման միջին բրոնզի շրջափուլում Հայկական լեռնաշխարհում առաջացել է ձևումի նոր՝ ելնդավոր աստառ ունեցող տիպ, որն ավելի է կատարելագործվել հետագայում՝ երկաթի դարաշրջանում: Իսկ վերոհիշյալ ժամանակաշրջանում կաթնաստեղծության բարձր մակարդակի մասին է վկայում նաև յուղամանների առկայությունը, որոնցից մեկը հայտնաբերվել է Ծովակ գյուղի մի դամբարանում³⁴: Քննարկվող անոթի բերանը փակված է եղել քարե կափարիչով: Այնուամենայնիվ, զարգացած անասնապահության պայմաններում կավե ձուլմաների գտածոների սակավությունը հուշում է, որ միջին բրոնզի դարաշրջանում կարագ ստանալու համար, ըստ երևույթին, լայնորեն գործածվել են տիկերը:

Կավաթուրծ ձուլմաները Հայկական լեռնաշխարհում հատկապես լայն տարածում են ստանում ուշ բրոնզի դարաշրջանում: Ուշբրոնզեդարյան ձուլմաների անցքերը դրսից օղակվում են կլոր ելուստով: Նաև ենթադրություն է արվել, որ հենց այդ ժամանակ են առաջացել աղեղնաձև հորիզոնական կանթերը, որոնք տեղադրվել են կավանոթների ուսերին ու առավել հարմարեցված են հարելու գործընթացին³⁵: Այս տարածված կարծիքը, հավանաբար, կարիք ունի ճշգրտման, քանի որ, ինչպես կտեսնենք ստորև, Հայկական լեռնաշխարհի հնագիտական հուշարձաններում դրանք հանդես են գալիս միայն ուշ բրոնզից վաղ երկաթի դարաշրջանին անցման կամ, գուցե, հենց վաղ երկաթի փուլում:

Ձուլմաներ են հայտնաբերվել պատմական Ուտի Առանձնակ գավառի Բորսունլուի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան դամբարաններում³⁶ և Շակաշենի (Գանձակի տարածաշրջան) քարակղզիներից մեկում³⁷: Բեշտաշենում հայտնաբերված ձուլմաներից մեկն ունի ստորին մասում սեղմվող գնդաձև իրան, գլանաձև վիզ և դեպի դուրս ընդգծված կլորացող շուրթ: Այն օժտված է ուռուցիկ պոնքով, սակայն զուրկ է կանթից (աղ. II,1)³⁸: Վանաձորի ուշբրոնզեդարյան դամբարանների պեղումներով գտնվել են «պորտաձակով» օժտված երեք ոչ մեծ ձուլմաներ³⁹: Ֆ. Բայերնի պեղումներով Դիլիջանի մոտ՝ Ռեդկին լազերի դամբարաններից մեկում հայտնաբերված անկանթ ձուլման ունի սև փայլեցված մակերևույթ, հորիզոնական ակոս-

³⁴ G. Tumanyan. Surface Pottery of the Bronze and Early Iron Age.— The North–Eastern Frontier Urartians and Non–Urartians in the Sevan Lake Basin. Documenta Asiana VII. Roma, 2002, pp. 252–253, fig. 1.

³⁵ И. Г. Нариманов. *Նշվ. աշխ.*, էջ 61:

³⁶ Г. Ф. Джафаров. Исследования у сел. Борсунлу.— АО 1983 года. М., 1985, с. 485.

³⁷ Т. А. Бунятов. *Նշվ. աշխ.*, էջ 39:

³⁸ Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, 1941, с. 66–67, 331, таб. XLVIII.

³⁹ Կ. Ղաֆադարյան. Դամբարանների պեղումներ Կիրովականում.— «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի, 1941, - 3–4, էջ 63:

ների հետ միասին ուսերին կրում է ալիքաձև և ուղիղ փորագիր գծեր, որոնցից ցած ընդգծվում է ուռուցիկ պորտը (աղ. II,⁴⁰): Նման զարդաբանվածքով և ուսին բացված անցքով ուշբրոնզեդարյան ձևում է հայտնաբերվել Ծաղկահովտի ամրոցի պեղումներով⁴¹: Վերջինը, սակայն, իրանի ձևով առավել մոտ է Բեշտաշենում գտնված վերոհիշյալ ձևումին: Կարագ ստանալու համար նախատեսված քննարկվող այս կավանոթը, ինչպես և նախորդները, նույնպես զուրկ է կանթից (աղ. II,³): Կանթ չունի նաև Օշականի ուշբրոնզեդարյան -95 դամբարանում հայտնաբերված խոշոր ձևումը⁴²: Հարթ հատակով, ձվաձև իրանով, սեղմված գլանաձև վզով և կլորացող շուրթով սույն կավանոթի ուսերը զարդաբանված են խորադիր հորիզոնական ալիքաձև և ուղիղ գծերով: Նույն հատվածում է տեղադրված մակերևույթի վրա օղակաձև շեշտված պորտը (աղ. II,⁴): Նախկին Շամախյան ավանի (Դիլիջան քաղաքի արվարձան) տարածքում բացված դամբարաններում գտնվել են երեք ձևում: Դրանք օժտված են ուռուցիկ պորտով, իսկ ուսերը զարդաբանված են հորիզոնական ակոսներով ու ալիքաձև և ուղիղ գծերով: Սրանցից ոչ մեկը բռնակ չունի⁴³: Ձևում է համարվում նաև պատահաբար հայտնաբերված կավանոթներից մեկը, որը պահվում է Դիլիջանի երկրագիտական թանգարանում⁴⁴: Գտնում ենք, որ այս հարցին արժե քիչ ավելի մանրամասն անդրադառնալ⁴⁵: Վերը հիշատակված ժամանակագրական ճշգրտումների վերաբերյալ կարևոր տվյալներ են ընձեռում Ռեդկին լագերում Բ. Պիոտրովսկու պեղումներով հայտնաբերված խեցանոթները: - 1 դամբարանում հայտնաբերված ձևումն ունի սև փայլեցված մակերևույթ, կարճ վիզ և կլոր շուրթ: Վզից դեպի ուսն անցման հատվածը զարդաբանված է իրար գուգահեռ ներձկված հորիզոնական գծերով, որոնցից ցած ընդգծվում է պոնքը (աղ.

⁴⁰ Т. А. Бу нятов. *Նշվ. աշխ., էջ 39–41, նկ. 11, 2*, С. А. Е с а я н. Древняя культура племен Северо-Восточной Армении (III–I тыс. до н. э.). Ереван, 1976, с. 136, таб. 106, 3.

⁴¹ P. Avetisyan, R. Badalyan, A. T. Smith. Preliminary Report on the 1998 Archaeological Investigations of Project ArAGATS in the Tsaghkahovit Plain, Armenia.– *Studi Micenei ed Egeo-Anatolici*, XLII/1, 2000, pp. 49–50, fig. 13, c.

⁴² С. А. Е с а я н, А. А. К а л а н т а р я н. Ошакан I. Ереван, 1988, с. 93, таб. XCVIII, 2.

⁴³ С. А. Е с а я н. Древняя культура племен Северо-Восточной Армении, с. 127–129, 157, таб. 119,⁷⁻⁹.

⁴⁴ Ս. Ս. Ե ս ա յ ա ն, Հ. Ա. Հ ն վ հ ա ն ն ի ս յ ա ն. Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի, Երևան, 1969, էջ 44–45, աղ. XVIII,¹:

⁴⁵ Քննարկվող այս անոթը, թեև ձևով չի զանազանվում նախորդներից, սակայն դրանցից տարբերվում է զարդաբանվածքով և «պորտի» պատրաստման եղանակով: Սրա ուսերը զարդաբանված են ներձկված գծերի միջև պատկերված փայլացանցով, որի մի հատվածում թրծելուց հետո անցք է բացվել: Բնականաբար, հիշյալ անոթը սկզբնապես չի պատրաստվել որպես ձևում և դրա լրահարդարումը, հավանաբար, կատարվել է այն դամբարան դնելու նպատակով: Եթե ճիշտ է ենթադրությունը, որ դրանով սափորը վեր է ածվել ձևումի, ապա դամբարանում այն պարզապես հանդես է եկել որպես նմանօրինակ կավանոթի փոխարինող և ուշբրոնզեդարյան տիպական ձևումների շարքում այն այստեղ դիտարկել չենք կարող:

II,5): - 4 դամբարանում նույնպես ձուլում է հայտնաբերվել, որը չափերով գերազանցում է նախորդին: Մրա վիզն ավելի կարճ է, ուսերը ծածկված են այլքաձև և ուղիղ գծերով, որոնցից ցած կա անցքով օժտված օղակաձև ելուստ (աղ. II,6)⁴⁶: Այստեղ հետաքրքիրն այն է, որ քննարկվող առաջին ձուլման ունկ չունի, իսկ երկրորդն օժտված է կանթով: Դամբանադաշտի միննույն հատվածում տեղադրված և մոտավորապես համաժամանակյա համալիրներում այս երկու տարբեր տիպի ձուլմանների ի հայտ գալը հուշում է, որ խոսքը վերաբերում է մի ժամանակաշրջանի, երբ ձուլմաների մի տեսակը փոխարինվում է մյուսով: Հիշենք, որ XIX դարավերջում հայտնաբերված դիլիջանյան համալիրները, այն ժամանակվա ուսումնասիրողների մեծ մասը վերագրել է ուշ բրոնզից վաղ երկաթի դարաշրջանին անցման փուլին: Բ. Պիոտրովսկին Ռեդկին լազերի դամբարանները քննարկում է ուշ բրոնզի դարաշրջանի ավարտական փուլի կամ վաղերկաթեդարյան (նախատարատական) հուշարձանների շարքում⁴⁷, իսկ ըստ հետագա հետազոտողների՝ Բ. Պիոտրովսկու կողմից 1942 թ. պեղված դամբարանները պատկանում են վաղ երկաթի դարաշրջանին⁴⁸: Նույն ժամանակաշրջանին պատկանող Սարատակի (Շիրակի մարզ, Ղուկասյանի տարածաշրջան) - 1 դամբարանում հայտնաբերված ձուլման նույնպես օժտված է հորիզոնական ունկով⁴⁹:

Այսպիսով, Հայաստանի ուշբրոնզեդարյան ձուլմաները տարբերվում են երկաթեդարյան նմանատիպ անոթներից, մասնավորապես, ունկի բացակայությամբ: Այսինքն, պորտով օժտված անկանթ ձուլմաների առկայությունը կարող է նպաստել դրանք պարունակող հնագիտական համալիրների փուլաբաժանմանը, քանի որ մշակութային զարգացման հաջորդ փուլերում հիշյալ տիպի անոթներն այլևս հանդես չեն գալիս: Հարևան Վրաստանի տարածքում հայտնաբերված ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլի ձուլմաները նույնպես օժտված են ընդգծված պորտով և առանց կանթի են⁵⁰: Վաղ երկաթի դարաշրջանում ի հայտ էր գալու հորիզոնական

⁴⁶ Ս. Ա. Եսայան, Հ. Ա. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 12-14, աղ. III,1, IX,1:

⁴⁷ Б. Б. Пиотровский. Археология Закавказья. Л., 1949, с. 64.

⁴⁸ А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 196-197; Ս. Ա. Եսայան, Հ. Ա. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 6.

⁴⁹ Н. Khatchatrian, J. Santrot. Baratte.- Arménie. Trésors de l'Arménie ancienne. Paris, 1996, p. 102-103, fig. 82.

⁵⁰ В. Г. Садрадзе. Мцхета в XV-XIII вв. до н. э. (Могильник Церовани II и вопросы хронологии и периодизации памятников Шида Картли).- Автореферат дис. на соискание ученой степени канд. ист. наук. Ереван, 1988, с. 16; Նույնի՝ Мцхета в XV-XIII вв. до н. э.: Вопросы хронологии и периодизации памятников Шида Картли. Тбилиси, 1991, таб. XI, 4; XXIII, 1; LVI, 2; LXXVI, 2; LXXXVI, 7,8; А. Н. Каландадзе. Мцхета, т. IV. Самтавро. Археологические памятники доантичной эпохи. Тбилиси, 1980, с. 55-56, 60-61, рис. 130-132, 158-160 (на груз. яз.).

աղեղնաձև կանթը⁵¹, որի շնորհիվ ձևվելը դառնալու էր ավելի հարմար և արդյունավետ⁵²: Մշակութային զարգացման այս շրջափուլում, ըստ երևույթին, ներդրվել է ևս մեկ նորամուծություն: Հավանաբար, քննարկվող կավանդների հետագա կատարելագործման արդյունք է Գյումրիում հայտնաբերված ձձումը («խնոցին»), որն աստառի վրա ունեցել է մի քանի շարք ծեփածո ելունդներ⁵³:

Համառոտ անդրադառնանք նաև ձձումի առնչվածությանը հայոց հին հավատալիքներին: Գորտի առկայությունը ձձումի մակերևույթին (չորացված վիճակում՝ որպես հմայիլ, պատկերի, ծեփածո քանդակի կամ որևէ այլ ձևով) կարող է խորհրդանշել այդ կենդանու պահպանական նշանակությունը, ինչպես նաև կապված լինել պտղաբերության գործառույթի հետ⁵⁴: Այն մեկ անգամ ևս ընդգծում է ձձումի կնոջ աշխատանքի գործիք լինելու իրողությունը⁵⁵ (գորտ – Նար աստվածուհի առնչվածության շրջանակում), որի մասին են վկայում նաև ազգագրական տվյալները⁵⁶: Այս համատեքստում ուշադրության է արժանի այն փաստը, որ Քոսի ճոթեր (Վանաձոր) վաղբրոնզեդարյան հուշարձանում հայտնաբերված հաստախեցի մի անոթի բեկորի վրայի պատկերը (աղ. I, 5) ստացել է երկակի մեկնաբանություն: Մի դեպքում այն համարվել է գորտի⁵⁷, մեկ այլ դեպքում՝ մարդու խորհրդանշական

⁵¹ Б. А. Куфтин. *Նշվ. աշխ., էջ 57, 293, աղ. XXIX*, Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, с. 239, рис. 152; *Նույնի՝* Арктикский некрополь. Каталог. Ереван, 1979, с. 71–72, 106, 271, 398; Н. Khatchatrian, J. Santrot. *Նշվ. աշխ., էջ 103 և այլն*:

⁵² Հիրավի, դժվար է պատկերացնել, որ ունկով օժտված ձձումների հետ միաժամանակ նույն տարածաշրջանում շարունակեին տևականորեն օգտվել նաև անկանթ օրինակներից: Վաղ երկաթի դարաշրջանից մինչև մեր օրերը աղեղնաձև կանթը դառնալու էր ձձումի անկապտելի մասը:

⁵³ Ե. Բալբախյան. *Նշվ. աշխ., էջ 214*:

⁵⁴ Ըստ Ս. Ս. Եսայանի, Այրումում հայտնաբերված ձձումներից մեկի պորտի վերևում առկա է գորտի պատկեր՝ բաց բերանով և դուրս պրծած աչքերով, որն առջևի թաթերով գրկում է «ծորանը» (С. А. Есян. Древняя культура племен Северо-Восточной Армении, с. 228; *Նույնի՝* Скульптура древней Армении. Ереван, 1980, с. 27): Ցավոք, այս աշխատանքում չենք կարող օգտվել նման ուշագրավ փաստից, քանի որ հորիզոնական ժապավենաձև պսակով և օղակաձև գույգ ունկով օժտված հիշյալ անոթը (ՀՊՊԹ, 2226/13), մեր կարծիքով, ձձում չէ:

⁵⁵ Իհարկե, ասվածից չի բխում, որ ձձումը տղամարդու դամբարանում չէր կարող տեղադրվել. տե՛ս, օրինակ, А. Н. Каландадзе. *Նշվ. աշխ., էջ 55–56, 60–61, 126–127, 130–131, 175, նկ. 130–132, 158–160, 595, 597, 599, 626, 630, 631*:

⁵⁶ Վ. Բոնյան. Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ.– Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. III, Երևան, 1950, էջ 7–12, 61, Ա. Ռ. Իսրայելյան. Գորտաձև զարդերի հետ կապված հավատալիքները և առասպելական գուգահեռները.– Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական վեցերորդ գիտական կոնֆերանս, Զեկ. թեգ., Երևան, 1987, էջ 29:

⁵⁷ Ն. Մեսրոպյան. Զարդանկարներ... – «Գիտություն և տեխնիկա», 1968, - 11, էջ 5, նկ. 5:

պատկեր⁵⁸: Հետաքրքիրն այն է, որ այս երկու մեկնաբանությունները, միգուցե, չեն հակասում իրար և այստեղ կարելի է տեսնել գորտ-կնոջ պատկերը կամ այլ խոսքով՝ Նար աստվածուհու մարմնավորումը⁵⁹:

«Ձուլմ հեծնող» կնոջ կերպարն առկա է և՛ հայ ժողովրդական վեպում («ճրծում խեծնող պառավ»)՝⁶⁰, և՛ ազգագրական նյութերում («խնոցի հեծնող պոչավոր պառավներ»)՝⁶¹, և՛ հայկական հրաշապատում հեքիաթներում, որոնցում պառավի համար ձուլմը փոխադրամիջոց է ծառայում, մասնավորապես, նստելով ձուլմի վրա, նա կտրում-անցնում է ծովը⁶²: Հիշյալ համատեքստում պարզ է դառնում, որ դամբարան իջեցված ձուլմին նույնպես կարող էր փոխադրամիջոցի նշանակություն վերագրվել: Հին պատկերացումներով, ըստ երևույթին, ննջեցյալն այնկողմնային աշխարհ կարող էր տեղափոխվել ոչ միայն նավ մտնելով կամ ձի հեծնելով, այլև՝ ձուլմի վրա նստելով: Հայ ազգագրությունում նա ձուլմը դիտարկվել է նաև ծիսական տեսանկյունով՝ որպես «կախարդի անոթ»⁶³:

Հայոց հին հավատալիքներում ձուլմն ուներ չարխափան նշանակություն: Համբարձման գիշերը տանտիկիները ձուլմի բերանը կապում էին և հեծնում: Աղջիկների բերած «աստղունք» դրած ջուրը, որը ենթարկվել էր համբարձման գիշերվա կախարդական հմայքին և «օծվել» առավոտյան ցողով, լցնում էին հարվող խնոցու մեջ, որ յուղն անպակաս լինի: Խնոցու մեջ էին զցում նաև սովորաբար եռատերև սիրի-սիրի ծաղկի երկտերև նմուշը: Այդ բոլորը լիությունն ու առատությունն ապահովելու նպատակ ուներ⁶⁴: Տնտեսության մեջ խնոցու կարևոր դերն են վկայում հայ ժողովրդական մի քանի տասնյակ հանելուկները: Դրանցում ձուլմը դիտարկվում է, որպես տնային մշտական գործածության կահ-կարասի և տանտիկնոջ կարևոր աշխատանքի գործիքներից մեկը⁶⁵: Ընտանիքի բարեկեցությունը, ինչ որ չափով, կախված էր նաև ձուլմից: Որպեսզի դրանով ստացվող կարագի քանակությունը չպակասի, դիմում էին տարբեր ծիսական հնարքների: ձուլմի ունկին խաչ էին խազում, վրան ամրացնում էին «աչքի» ուլունք, կրիայի գրահ, ուռենու

⁵⁸ Գ. Կ ա Ր ա խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., պ. XLVI, 1:

⁵⁹ Բ դեպ, ջրին և գորտերին իր առնչվածությամբ, Նար աստվածուհուն համարժեք կերպար է հայկական հեքիաթի Անրան Հուրին:

⁶⁰ Սասնա ծռեր, հ. Ա, Երևան, 1936, էջ 718:

⁶¹ Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք. – Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 242:

⁶² С. А. Гу л л а к я н. Указатель мотивов армянских волшебных сказок. Ереван, 1983, с. 130, 196.

⁶³ Ю. А н т о н я н. Сосуд кахарда: мифо-ритуальные параллели. – Дар свыше: миф, ритуал и история. Сборник статей в честь 80-летия Саргиса Арутюняна. Ереван, 2008, с. 176–188.

⁶⁴ Հ. Խ ա ն ա տ յ ա ն – Ա ն ա ք ե լ յ ա ն. Հայ ժողովրդական տոները, Երևան, 2000, էջ 143–146, 152:

⁶⁵ Ս. Բ. Հ ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ Ա Ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 140–142:

օրհնված ճյուղ և չարխափան այլ հմայիլներ⁶⁶: Երբ ձձումը ժամանակավոր օգտագործման համար տրամադրում էին հարևանին, ապա դրա դիմաց գրավ էին վերցնում որևէ այլ առարկա, սովորություն, որը բացատրվում է տան ոգու՝ տան դովլաթի, հավատալիքներով⁶⁷: Նման վարվեցողության հիմքում ընկած է այն բաղձանքը, որ իրի հետ տան դովլաթն էլ հանկարծ չհեռանա, տան ունեցվածք-հարստությունը չպակասի, և ընտանիքը շարունակի բարգավաճել: Ինչպես պարզ դարձավ վերն ասվածից, հայոց հին պատկերացումներով, ձձումը և խնոցին կապված էին առատության ու բարիքի հետ: Այդ է վկայում նաև ժողովրդական հետևյալ քառատողը.



Հարի՛, հարի՛, խնոցի՛,
 Մեջըդ բարի, խնոցի՛,
 Ունկըդ բարակ, խնոցի՛,
 Մեջըդ կարագ, խնոցի՛⁶⁸:

⁶⁶ А. Т. Марутян. *Նշվ. աշխ., էջ 133*:






⁶⁷ З. В. Харатян. Культурные мотивы семейных обычаев и обрядов у армян.— Армянская этнография и фольклор. Материалы и исследования, 17. Ереван, 1989, с. 42–43.

⁶⁸ Հ. Թումանյան. *Երկեր, հ. 1, Երևան, 1958, էջ 164*:

Աղյուսակ I



Աղյուսակ II



МАСЛОБОЙКИ АРМЕНИИ БРОНЗОВОГО ВЕКА

ГАРЕГИН ТУМАНЯН, ВАРДУИ МЕЛИКЯН

Резюме

Маслобойка – яйцевидный керамический сосуд, предназначенный для получения масла, путем взбивания мацони или сметаны. На плече глиняного сосуда имеется сквозное отверстие. Согласно этнографическим данным, маслобойку пахтали женщины в сидячей позе, устанавливая сосуд в горизонтальном положении на устланном на полу коврик. Раннебронзовые маслобойки обнаружены в Шенгавите, Мохраблуре (Нахчаван), Гарни, Эларе, Баба-Дервише и в других памятниках куро-аракской культуры. По форме эти сосуды в основном похожи на большие кувшины. Отверстия обычно проделывались на плечиках, до обжига. Предполагается, что фрагмент днища сосуда с сосцевидным выступом, найденный в среднебронзовом поселении Узерлик-Тепе, является частью маслобойки. В эпоху средней бронзы для получения масла, видимо, широко применялись и бурдючные маслобойки. Керамические маслобойки на Армянском нагорье широко распространяются особенно в эпоху поздней бронзы. Их отверстия снаружи окружены круглыми выступами, а плечики обычно орнаментированы волнистыми и прямыми горизонтальными линиями. Аналогичные маслобойки обнаружены в Редкин-лагере (Дилижан), Ошакане, Цахкаовите, Бешташене, Шакашене и в других местах. Вероятно, в эпоху раннего железа возникла дугообразная горизонтальная ручка маслобойки, благодаря чему пахтанье стало более удобным и продуктивным.

THE BRONZE AGE CHURNS OF ARMENIA

GAREGIN TUMANYAN, VARDUHI MELIKYAN

Summary

Churn is an oval ceramic vessel intended for making butter through beating yoghurt or sour cream. There is a reach-through hole in the shoulder of the clay vessel. According to the ethnographic data, women churned it in a sitting posture, placing the churn horizontally on a floored carpet. Early Bronze Age churns were discovered in Shengavit, Mokhrablur (Nakhchavan), Garni, Elar, Baba-Dervish and other monuments of Kura-Araxes culture. By shape, these vessels mainly look like big jugs. The holes were usually made in their shoulders, prior to burning. Presumably, a fragment of a churn bottom with a mammiform protuberance was found in the Middle Bronze Age settlement Uzerlik-Tepe. Apparently, skin churns were widely used to make butter in the Middle Bronze Age. The wide use of ceramic churns in the Armenian Highland begins mainly in the Late Bronze Age. From outside, the holes of these churns are surrounded with round knobs. The shoulders are ornamented with wavy or straight horizontal lines. Such churns were uncovered in Redkin-lager (Dilijan), Oshakan, Tsaghkahovit, Beshtashen, Shakashen, and other sites. The arched horizontal handle of churn was probably formed in the Early Iron Age, thanks to which churning became more comfortable and effective.